# Ծնողական և համայնքային ծառայություններ

Սկսելու համար մուտք գործեք LAUSD Ծնողական պորտալ՝ այցելելով վեբ կայք հետևյալ հասցեով՝ lausdapp.lausd.net: Պարզապես մուտքագրեք հասցեն ձեր վեբ դիտարկիչում, և անմիջապես կտեղափոխվեք պորտալի մուտքի էջ:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Սեղմեք **Մուտք** դաշտում



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Որպես ծնող մուտք գործելու համար՝ մուտքի էջում ընտրեք «Ծնողներ» տարբերակը: Այն կուղղորդի դեպի անվտանգ և անհատականացված տեղեկատվական էջ, որտեղ կկարողանաք ստանալ տեղեկություններ երեխայի կրթության և առաջադիմության մասին:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Ձեր ծնողական հաշիվ մուտք գործելու համար սեղմեք «Ծնողներ» ստեղնը:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Մուտքի գործընթացն ավարտելու համար համապատասխան դաշտերում մուտքագրեք ձեր օգտանունն ու գաղտնաբառը: Վստահ եղեք, որ մուտքագրել եք ճիշտ տվյալներ:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Նախքան մուտք գործելը ձեզնից կպահանջվի հաստատել, որ ռոբոտ չեք: Դա անելու համար սեղմեք «Ես ռոբոտ չեմ» վանդակը



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Ձեր ծնողական հաշիվ մուտք գործելու համար սեղմեք «Մուտք գործել» ստեղնը: Սեղմեք **Մուտք** դաշտում



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Հաջողությամբ մուտք գործելուց հետո դուք կուղղորդվեք դեպի LAUSD-ի ծնողական պորտալի տեղեկատվական էջ: Այստեղ դուք կգտնեք ձեր երեխայի կրթության հետ կապված ամբողջ տեղեկությունը և ռեսուրսները, այդ թվում՝ գնահատականները, հաճախումները և այլ կարևոր թարմացված տեղեկություն:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Ուսումնասիրեք տեղեկատվական էջը՝ հասանելի բոլոր հնարավորություններին ծանոթանալու և պորտալից առավելագույնս օգտվելու համար:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

LAUSD-ի ծնողական պորտալի տեղեկատվական էջը հնարավորություն է տալիս միաժամանակ դիտել երեք սովորողների հետ կապված կարևոր մանրամասներ: Դուք կարող եք անցում կատարել սովորողների միջև՝ ձեր երեխաներից յուրաքանչյուրի մասին առկա տվյալներին ծանոթանալու համար:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Այդ կարևոր մանրամասների մեջ ներառվում են սովորողների գնահատականներին, հաճախումներին և կարևոր այլ կետերին արագ անդրադարձը, որոնք կօգնեն ձեզ լինել տեղեկացված նրանց առաջադիմության մասին



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք իջնել էջի ներքևի հատված և ընտրել «Դիտել ուսանողի տվյալները» տարբերակը:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Ուսանողների մենյու մուտք գործելու համար սեղմեք «Ուսանողների մենյու» ստեղնը:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

ⓘ Ծնողական պորտալի նոր թարմացված ընտրացանկն արտացոլում է ծնողական պորտալի ընտանիքների համար հասանելի և արդեն ծանոթ դասավորությունը և հնարավորությունները։



# Ծնողական և համայնքային ծառայություններ

«Ավտոբուսի երթուղիներ» գործառույթի միջոցով ընտանիքներն այժմ կարող են ներգրավվել իրական ժամանակի վերջին թարմացումներին և տեսնել իրենց սովորողի ավտոբուսի գտնվելու վայրը քարտեզի վրա՝ դարձնելով փորձառությունն ավելի հարմար:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

ⓘ Ծնողական պորտալն ունի օգտատերերի համար նախատեսված հարմար կողմնագոտի, որը ծնողներին հնարավորություն է տալիս առանց մեծ ջանքերի տեղափոխվել և մուտք գործել ծնողական պորտալում հասանելի ամբողջ տեղեկությունը։



# Ծնողական և համայնքային ծառայություններ

## Ուսանողներ

Ձեր ծնողական հաշվին կցված սովորողների մասին համապարփակ տեղեկություն ստանալու համար կողմնագոտու հատվածում պարզապես ընտրեք «Ուսանողներ» տարբերակը:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Օրացույց

Այն ընտանիքների համար ծառայում է որպես տեղեկանալու կենտրոնական օջախ՝ դպրոցական և շրջանային բոլոր միջոցառումների և աշխատանքների, ինչպես նաև վերջին թարմացումների մասին տեղեկանալու համար։ Այն ապահովում է, որ գրաֆիկներն անխափան կերպով սինխրոնիզացված և կազմակերպված լինեն մեկ հարմար վայրում։



# Ծնողական և համայնքային ծառայություններ

## Կոնտակտներ

Ծնողական պորտալը համարվում է դպրոցական բոլոր կոնտակտների, այդ թվում՝ ուսանողի հետ փոխկապակցված ուսուցիչների համար տեղեկության համապարփակ և կենտրոնացված աղբյուր:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Ինչն էլ հեշտացնում է ծնողների գործը իրենց անհրաժեշտ տվյալներ մեկ վայրում արագ մուտք գործելու հարցում՝ ՝ առանց բազմաթիվ ռեսուրսներում որոնումներ կատարելու:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Նորություններ և իրադարձություններ՝

Բաժինը ծառայում է որպես կապծնողի և դպրոցի կայքի, ինչպես նաև LAUSD-ի վերջին թարմացումների միջև։



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Այս հնարավորության միջոցով օգտատերերը կլինեն տեղեկացված և կստանան կարևոր նորությունների և աշխատանքների վերաբերյալ վերջին թարմացումները՝ հեշտությամբ հասանելիություն ունենալով վերջին հրապարակումներին և սպասվող միջոցառումներին անմիջապես դպրոցի և շրջանի վեբ էջերից։



# Ծնողական և համայնքային ծառայություններ

## Ռեսուրսների կենտրոն

Առաջարկում է արժեքավոր ռեսուրսների կենտրոնացված պահեստ LAUSD-ից, ինչպես նաև հուսալի արտաքին հաստատություններից: Ռեսուրսների այս հարմար և համապարփակ կենտրոնը հսկայական տեղեկություն է տրամադրում ուսանողների, ընտանիքների և անձնակազմի համար հեշտությամբ հասանելի մեկ վայրում: Ծնողների համար հեշտացնում է ծնողների գործը իրենց անհրաժեշտ տեղեկությունը գտնել ու հարցում՝ առաջարկելով ռեսուրսների ֆիլտր՝ ըստ նախընտրության:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Այս հնարավորությունը թույլ է տալիս ծնողներին մուտք գործել համապատասխան ռեսուրսներ՝ ավելի քիչ ժամանակ ծախսելով որոնման համար և ավելի շատ ժամանակ տրամադրելով տեղեկության կիրառմանը՝ արագ և արդյունավետկերպով նպաստելով իրենց երեխայի կրթությանը:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

ՀՏՀ (Հաճախակի տրվող հարցեր)

Ընտանիքներին աջակցելու համար առաջարկում է հարցերի և պատասխանների ցանկ՝ ընդգրկելով թեմաների լայն շրջանակ:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

## Շրջանի աջակցություն

Ծնողներին կապում է հաճախորդների սպասարկման նոր պորտալի հետ՝ ապահովելով շրջանի աջակցման ծառայությունների անխափան և հարմար մուտք գործելու միջոց:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Այս հնարավորության միջոցով օգտատերերը կարող են արագ և հեշտությամբ կամ հաստատել շրջանի հետ՝ իրենց հուզող ցանկացած հարցին կամ մտահոգության առնչվող օգնություն ստանալու համար:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

## Նախապատվություններ

Յնարավորություն է տալիս օգտատերերին հարմարեցնել իրենց պրոֆիլը նախընտրած լեզվի օգնությամբ, թարմացնելով էլ. փոստի հասցեն և գաղտնաբառը: Այս հնարավորության միջոցով օգտատերերը կարող են վերահսկել իրենց պրոֆիլի տվյալները՝ անհատականացնելով իրենց փորձը և առավել ագույնս օգտվելով ծնողական պորտալից:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Օգտվողները ցանկացած ժամանակ կարող են վերադառնալ ծնողական պորտալի նախորդ դիտմանը՝ սեղմելով Դասական ռեժիմի ստեղնի վրա: Սածանոթ և հարմար տարբերակ է ապահովում սկզբնական տեսքը նածընտրող օգտատերերի համար:



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Էջից դուրս գալու համար պարզապես սեղմեք ելքի ստեղնը: Ինչը նշանակում է, որ ձեր մուտքն ապահով կերպով ավարտված է՝ ապահովելով ձեր գաղտնիությունը և տվյալների անվտանգությունը:

Շնորհակալություն



# Ծնողական և համայնքային ծառայություններ

Լրացուցիչ աջակցության համար կարող եք կապ հաստատել ձեր դպրոցի հետ կամ զանգահարել մեր թեժ գծի համարին

Ընտանիքների համար՝ (213) -443-1300

Աշխատակիցների համար՝ (213) 241-2700